չաբեաններին՝ մի հարիւր ռուբլի նուիրաբերութեան համար։ Սեպտեմբեր 3. թ. 1972։

Հայրապետական պարգեւատրութիւն.

Կոնդակ Եւդոկիայի առաջնորդակ. տեղապահ Տ. Արտաւազդ ծ. վարդապետ Գալէնտէրեանի անունով, որով Գ. Պոլսոյ հայոց Ամենապատիւ Պատրիարքի միջնորդութեան համաձայն վարդապետական ականակուռ լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց իւր հաւատարիմ ծառայութեան համար։ Օգոստոս 24. թ. 1912։

ՔԱՂՈՒԱԾ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳԻՐՆԵՐԻՑ

Օգոստ. 2. թ. 471։ Սինոդը լսելով, որ Տ. Փոխարքան յունիսի 19-ին հաստատել է Սինոդի հաշուապահի պաշտօնակատար Մինաս Մանուէլեանցին, որոշեց պատուիրել Մայր Աթոռի գանձապահին վճարել Սինոդի նոր նշանակուած հաշուապահ Մինաս Մանուէլեանցին ամսական քսան և հինգ ռուբլի Մայր Աթոռի գանձարանից ի յաւելուած իւր արքունուստ ստացած ռոճկի, սկսած յուլիսի 1-ից։ Այս յաւելեալ վարձատրութեան փոխարէն նոր հաշուապահը պարտաւոր է կատարել Սինոդիս բոլոր յանձնարարութիւնները, Մայր Աթոռի հաստատութեանց հաշիւները ստուգելու վերաբերութեամբ։

Օգոստ. 2. թ. 475։ Վեհափառ Հայրապետը թ. 1701, տարեւոյս յուլիսի 23-ին կոնդակով, յանձնել էր Սինոդին Պ. Ալէքսանդր Մէլիք-Ազարեանի աջհամբոյր տուած 500 ռ. Սինոդը որոշեց, որովհետև Վեհափառ Հայրապետի 1909 թ. հոկտեմբերի 7-ին, հմր. 112 կոնդակով ուղարկուած 2000 ռուբլու մասին արդէն ժամանակին կարգադրութիւն ա-

բուած է. այսինքն գնուած են այդ գումարով Աշնուականների հողային դրամատան 4%-աբեր արժէթղթեր, ուստի Նորին Սրբութեան սոյն յուլիսի 23-ին թ. 1701 կոնդակով ուղարկուած 500 ռուբլով ևս գնել 4% պետական ռենտայի արժէթղթեր, որ և միացնել Մ. Աթոռի Հոգևոր Ճեմարանի անձեռնմխելի գումարին և միայն այդ գումարի տոկոսները գործադրել Ճեմարանի պէտքերի համար։ Վճռիս կատարման մասին տալ հրաման Մ. Աթոռի գանձապահին, և այս վճռի մասին ամենախոնարհ յայտարարութեամբ տալ տեղեկութիւն Նորին Սրբութեան։

Օգոստ. 6. թ. 476. Սինոդը լսելով ներքին գործոց նախարարի թուղթը տարեսոյ յուլիսի 12-ին թ. 5918. որով յայտնում է, թէ ՆՈՐԻՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ յուլիսի 9-ին բարեհաճել է թոյլ տալ Բեսսարաբիայի նահանգի Բելցի քաղաքում, շինել հայ եկեղեցի, որոշեց. այս ԲԱՐՁՐԱԳՈՅՆ թոյլտուութեան մասին յայտնել Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի կոնսիստորիային ի տեղեկութիւն, ուղարկելով եկեղեցու շինութեան յատակագիծը։

Օգոստ 6. թ. 479. Սինոդը որոշեց. Վեհափառ Հայրապետի թ. 1767. տարեսոյ յուլիսի 30-ին կոնդակի համեմատ թոյլ տալ Շամախու կոնսիստորիային սոյն տարեսայ յունվարի 1-ից հատուցանել թեմական ատենի գրագիր Աղէքսանդր Վլասեանցին ամսական 25 ռ. և ծառայ Աբրահամ Պողոսեանցին 15 ռ. ռոճիկ՝ համաձայն Սինոդի 1909 թ. հոկտեմբեր 2 № 2293 հրամանի։

Օգոստ 9 թ. 481. Սինոդը լսելով Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեանցի տարեսոյ յուլիսի 23-ին յայտարարութիւնը, որոշեց. նախ, Մ. Աթոռի Բջնի գիւղը իսպառ հանել կոնսիստորիայի իրաւասութիւնից և գործակալի կառավարութիւնից և առնել Սինոդի անմիջական տեսչութեան տակ. նշանակել Բջնու անտառի համար մի կառավարիչ երկու օգնականներով, սահմանելով ռոճիկ կառավարչին՝ ամսական քսան և հինգ ռուբլի, սեփական ձի ունենալու պարտաւորութեամբ. ձին պահելու համար

տալ նրան տարեկան երեսուն ռուբլի բացի իւր ռոճկից, իսկ օգնականներին՝ ամսական իւրաքանչիւրին եօթն ռուբլի։ Երկրորդ, իսպառ արգելել անտառից դալար ծառ կտրելը տասն և հինգ տարուան ընթացքում. իսկ թափած չոր փայտը թոյլ տալ արտահանել պետական սակագնով, առանձին տոմսակներով։ Երրորդ՝ պահանջել կոնսիստորիայից Բջնու վերաբերեալ բոլոր գործերը, մասնաւորապէս նախկին կառավարիչ Յովսէփ Մուշեղեանի ձեռքով կատարուած անտառաբաժինների վաճառման գործը։ Չորրորդ, գիւղամիջի անտառեղում չինել երկու սենեակ որոնցից մէկը կարող է լինել ընակարան կառավարչի համար առանձին վարձով, իսկ միւսը՝ իշխան առանձին նշանակուած քննիչների համար։ Այս շինութեան ծախքը նշանակել մի հարիւր ռուբլի, որի հատուցման համար տալ հրաման Վանական Կառավարութեան, պատուիրել գործը աւարտելուց յետոյ հաշիւը մատուցանել Սինոդիս։ Հինգերորդ, տալ անտառի կառավարչին մտեալ թղթերի և շրջաբերական մատեաններ, նամանաւորապէս դրամների մտից և ելից տուժար չոր փայտի արտահանութեան տոմսերի գրքոյկ, արձանագրութիւններ գրելու թերթեր արքունական ձեւով և ամսէ ամիս պահանջել նրանից դատարանին յանձնուած գործերի ցուցակը. վեցերորդ, խնդրել Նոր—Բայազէտի գաւառապետից դուրս հանել «Ջէյրան—Բուլաղ» և «Կարմիր—Քար» անտառամասերից եայլաղաւորներին և ուղարկել նրանց իրանց սովորական եայլաղատեղին։ Եօթներորդ, պահանջել Սինոդիս նախկին հարկաժողով Արսէն Տ. Պողոսեանից Բջնու մակարդակը։ Ութերորդ, թոյլ տալ վանական կառավարութեան երեք հրացանի իրաւունք ստանալ անտառի կառավարչի և իւր երկու օգնականների համար։ Իններորդ, յանձնել Վանական Կառավարութեանը ամիսը մի անգամ վերստուգել անտառի կառավարչի տուժարներն ու հաշիւները։ Եւ տասներորդ՝ Սինոդիս փաստաբանի հետ խորհրդակցելով՝ ոչնչացնել Բջնու վարձակալութեան պայմանը, վերջնիս 3, և 4. կէտերը խախտուած լինելու պատճառով. և նոր աճուրդ

նշանակել այժմեանից իսկ վարձու տալով վանքի աղչայ հողերը և խոտահարքը, իսկ եկող տարուանից և ամբողջ գիւղը։ Վճռիս կատարման համար հրաման հանել Մ. Աթոռի Վանական Կառավարութեան և Երևանի կոնսիստորիային։

Օգոստ. 11 թ. 484։ Սինոդը թոյլ տուեց Վանական Կառավարութեան ծախսել Ս. Գայեանէի վանքի նոր շինութեան նորոգութեան համար 87 ռ. 40 կոպ. նախահաշուից դուրս։ Այդ գումարը նախահաշուից դուրս Վանական Կառավարութեան հատուցանելու համար տալ հրաման Մայր Աթոռի գանձապահին։

Օգոստ. 11. թ. 485։ Սինոդը լսելով Բաքուի նահանգապետի № 15,932, օգոստոսի 5-ին թուղթը մահմեդական Աբդուլլահ-զուլի-օղլու հայ եկեղեցու ծոցը մտնելու արգելք չլինելու մասին, որոշեց, պատուիրել Շամախու կոնսիստորիային կարգադրել մկրտել Աբդուլլահ-զուլի-օղլուն հայ եկեղեցու ծիսի համաձայն և կատարածի մասին յայտնել Ատենիս։

Օգոստ. 11. թ. 487։ Սինոդը, ինկատի ունելով, որ Հանգ. Մկրտիչ կաթուղիկոսի գերեզմանի համար տապանաքարը բերուել և պատշաճ արձանագրութեամբ արդէն դրուել է գերեզմանի վերայ, որոշեց, այս մասին իւր Կառավարչական մասում գործը կարճել։ Թ. 486.

Օգոստ. 11 487 Սինոդը լսելով Վանական Կառավարութեան նախագահ Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեանի յուլիս 2-ին յայտարարութիւնը, որոշեց, հաստատելով Երևանի աթոռապատկան կրպակների նորոգութեան համար տեղի ունեցած աճրդախօսութիւնը, որով այդ նորոգութիւնը մնացել է Ստեփան Մարգարեանի վերայ 1850 ռուբլով,—պարտաւորել Մայր Աթոռի Վանական Կառավարութեանը և Երևանի վիճակային կոնսիստորիային հսկել յիշեալ խանութների նորոգութեան վերայ, վճռիս մասին տեղեկութիւն տալ Երևանի կոնսիստորիային։

Օգոստ. 11. թ. 489. Սինոդը լսեց զեկուցումն, որից երևաց, որ ռուսական երկաթուղիների 4% երաշխաւորեալ պարտաթղթերի (консолидированныя Россійскія 4% желѣзнодорожнія облигаціи) մի մասի կտրոնները վերջացած են, որոշեց, հանել ներքին գանձարանից I սերիայի օբլիգացիաները թուով տասն հատ, իւրաքանչիւրի անուանական արժէքը 625 ռուբ. իրանց կոճղներովը և յանձնել Մայր Աթոռի գանձապահին, պատուիրելով ուղարկել Ս. Պետերբուրգի պետական դրամատունը փոխանակելու ամբողջ թերթերի հետ.

Օգոստ. 13. թ. 433. Սինոդը լսելով զեկուցումն, որոշեց նախ՝ Երևանի կոնսիստորիայի միջնորդութիւնը ընծայացու Մարտիրոս Տէր Յովհաննիսեանցի ձեռնադրութեան մասին մերժել այն պատճառով, որ սա ընտրուած չէ Ղաչաղանի ծխական ժողովի կողմից, քանի որ ժողովականների ձայների կիսից պակաս քուէ է ստացել, երկրորդ, մերժել նաև Ղաչաղանի ծխական ժողովի միջնորդութիւնը Եփրեմ Տէր Ստեփանեանցի ձեռնադրութեան մասին, որովհետև սրա ընտրութիւնն էլ չէ համապատասխանում ծխական կանոնադրութեան 60 յօդուածին, որով հոգևոր պաշտօնեաների ընտրուած լինելու համար պահանջւում է ընտրական ժողովին ներկայ եղող իրաւասուների ձայների $^2/_3$ մասը, մինչդեռ Տէր Ստեփանեանցն ստացել է միայն ծխական ժողովի ձայների կիսից աւելին, և երրորդ, աչքի առաջ ունենալով, որ կոնսիստորիայի տարուոյս յունիսի 4 թուակիր № 3958 յայտարարութիւնը Ղաչաղան գիւղի քահանայացուների գործի մասին պակասաւոր է և չէ համապատասխանում գործի հանգամանքներին, նկատողութիւն անել Երևանի կոնսիստորիային այդպիսի վերաբերմունքի համար և հրաւիրել ի զգուշութիւն.

Օգոստ. 18. թ. 494. Սինոդը լսելով Վեհափառ Հայրապետի, օգոստոսի 9-ին թ. 1818. կոնդակը, որոշեց. պատուիրել Մայր Աթոռի տպարանի վարչութեանը տալ նախկին գրաշար Սմբատ Ճուղուրեանին կենսաթոշակ ամ-

սական տասն ռուբլի, սկսած տարւոյս յունիսի 1-ից, վճարելով այս տարուայ հասանելիք բոլոր գումարը նախահաշուից դուրս, իսկ առաջիկայ 1911 թուականից մուծանել այդ թոշակը նախահաշուի մէջ։ Այս տարուան ընթացքում՝ եօթանասուն ռուբլի նախահաշուից դուրս Տպարանի վարչութեանը հատուցանելու համար հրաման տալ Մայր Աթոռի գանձապահին։

Օգոստ. 20 թ. 502. Սինոդը լսելով հանգ. բժ. Աղէքսանդր Վահրամեանցի 1897 թուի կազմած կտակի գործը՝ որոշեց. նախ՝ պատուիրել Վրաստանի Հայոց կոնսիստորիային տարին մի անգամ տեղեկութիւն տալ Սինոդիս տիկին Մարիամ Վահրամեանի և իւր դստեր մասին (Ժառանգներ). երկրորդ բժ. Վահրամեանի կտակի պատճէնը մատուցանել Նորին Սրբութեան ի տեղեկութիւն. երրորդ օրագրիս պատճէնը տալ Սինոդի Հաշուարարական մասին պահելու ի թիւս այլ կտակների և չորրորդ՝ այս գործը կարճել և ժամանակին տալ դիւան պահելու։

Օգոստ. 20. թ. 503. Սինոդը լսելով Երևանի Պ. Նահանգապետի, № 4 132., օգոստոսի 12-ին, գրութիւնը. Հին-Նախիջևան քաղաքի բնակչուհի Թելոյի հայ եկեղեցու ծոցը ընդունելու արգելք չլինելու մասին, որոշեց. ուղարկելով .ինչեալ Թելոյի խնդիրը պատուիրել Երևանի կոնսիստորիային կարգադրել ընդունել նրան հայ եկեղեցու ծոցը, և կատարման մասին յայտնել Սինոդին։

Օգոստ. 20. թ. 506. Սինոդը լսելով զեկուցումն, որոշեց. պատուիրել Կարսի հոգևոր կառավարութեանը ըստ առաջնոյն հատուցանել Անիի վանահայր Տ. Միքայէլ վարդապետին ամսական 25 ռուբլի հանդերձագին, սկսած տարւոյս մայիսի 1-ից։

Օգոստ. 20 թ. 506. Սինոդը լսելով զեկուցումն, որոշեց. որովհետև Եղիազար եպիսկոպոսի այգին այս տարուանից արդէն տրուած է վարձու նոր կապալառուի 9 տարի ժամանակով, որի համար կազմուած է նոր գործ, ուստի Հաշուարարական մասի № 23|907 գործը կարճել։

Օգոստ. 20. թ. 508։ Մինոգը լսելով № 56|902 գործի մասին զեկուցումն, որից երևաց, որ հոգևոր հաստատութիւններին տրուած մատեանները իւր ժամանակին չետ են ստացուել իրանց արժէքներով, որոշեց. Հաշուարարական մասի № 56|902 գործը կարճել և ժամանակին տալ դիւան պահելու։

Օգոստ. 23. թ. 516։ Մինոգը լսելով Վանական Կառավարութեան օգոստոսի 23-ի յայտարարութիւնը, որոշեց. իբրև նպաստ տալ Մայր Աթոռի գանձարանից մի հարիւր ռուբլի գիւղում խօլերայով հիւանդացողների համար ժամանակաւոր հիւանդանոց յարմարեցնելու համար։ Այս գումարը Էջմիածնի գաւառապետին Վանական Կառավարութեան ձեռքով հասցնելու համար տալ հրաման Մայր Աթոռի գանձապահին։

Օգոստ. 23. թ. 514։ Մինոգը լսելով Հաշուարարական մասի № 1|1909 գործը եկեղեցիների եռատեսակ մատեանների մասին, որոշեց. որովհետև եռատեսակ մատեանների գինն արդէն ստացուած է Մինոգումս և Մայր Աթոռի տպարանում, ուստի Հաշուարարական մասի № 1|1909 գործը կարճել և ժամանակին տալ դիւան պահելու։

Օգոստ. 23 թ. 513։ Մինոգը լսելով զեկուցումն, որով ըստ II հատ. I մասն 56—62 յոդ. օրինաց աւարտուած գործերը երեք տարուց յետոյ պէտք է յանձնուեն դիւանին, իսկ Հաշուարարական մասի գործերը 1902—1907 թ. չեն յանձնուած, որոշեց պատուիրել Մինոգի համարակալին, Հաշուարարական մասի կառավարիչ Մատթէոս վարդապետի և Մինոգի ատենադպրի հսկողութեամբ յանձնել դիւան, և դիւանապահին՝ ստանալ այդ մասի 1902—1906 թ. աւարտած բոլոր գործերը և մատեանները։